«Այբ կրթական հանգույց» հիմնադրամ
Երևան 0052, Թբիլիսյան խճ. 11/11
Հեռ.՝ +374 98 546 497, +374 93 012 015
welcome@aybschool.am
www.aybschool.am

Արձանագրություն
№ ASBT08-2601 (1902)

«Այբ կրթական հանգույց» հիմնադրամի 8-րդ գումարման հոգաբարձուների խորհրդի նիստի

Ամսաթիվ՝	19 փետրվարի 2026 թ.
Անցկացման վայր՝	«Այբ» դպրոց, ՀՀ, ք. Երևան, Թբիլիսյան խճուղի 11/11 / Zoom հարթակ
Նիստի սկիզբ՝	18:00

ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ

Հոգաբարձուների խորհրդի (ՀԽ) անդամներ՝

1. Սարգիս Բաղալյան - ՀԽ նախագահ (առկա),
2. Աշոտ Մկրտչյան (առցանց),
3. Արամ Կայֆաջյան (առցանց, չի մասնակցել 7-րդ, 8-րդ, 9-րդ, 10-րդ հարցերի քննարկմանը),
4. Ջուլիետա Կճանյան (առկա),
5. Հակոբ Պետրոսյան (առկա),
6. Ռուբեն Հարությունյան (առցանց, չի մասնակցել, 8-րդ, 9-րդ, 10-րդ հարցերի քննարկմանը),
7. Տիգրան Բունիաթյան (առցանց, չի մասնակցել, 1-4-րդ հարցերի քննարկմանը),

Նիստին չեն մասնակցել՝

1. Տիգրան Հարությունյան,
2. Հայկ Եգանյան,
3. Ռաֆֆի Ֆըստըգճյան,
4. Վազգեն Յակուբյան

Նիստին մասնակցել են հոգաբարձուների խորհրդի տասնմեկ անդամներից յոթը, ինչն ապահովում է որոշումների կայացման համար անհրաժեշտ քվորումը:

Նիստի քարտուղար ընտրվեց Էլլա Ավագյանը (առկա):

Առանց ձայնի իրավունքի նիստին մասնակցել են.
Դավիթ Սահակյան (Գործադիր տնօրեն: Առկա:),
Սիլվիա Նաջարյան (Կրտսեր դպրոցի տնօրեն: Առկա:),
Աննա Ակոպյան (Միջին դպրոցի տնօրեն և Համայնքի գծով տնօրեն: Առկա:),
Մերի Հովսեփյան (Ավագ դպրոցի տնօրեն և Ակադեմիական տնօրեն: Առկա:),
Հայկ Պողոսյան (Գործառնական տնօրեն: Առկա:),
Վահե Գաբրիելյան («Այբ» կրթական հիմնադրամի տնօրեն, Առկա:)
Մեսրոպ քահանա Արամյան ((«Այբ» կրթական հիմնադրամի ռազմավարական ծրագրերի տնօրեն: Առցանց),

Հարց 1. Օրակարգի հաստատում: Հարցեր, որոնք այս օրակարգում ընգրկված չեն եղել:

Որոշում՝ հարց 1

1. Հաստատել ՀԽ-ի նիստի 2026 թվականի փետրվարի 19-ի օրակարգը՝ ավելացնելով «Այբ» կրթական հիմնադրամի և «Այբ» դպրոցի հոգաբարձության խորհուրդների համատեղ ռազմավարական կոմիտեի ձևավորման հարցը:

Որոշումը կայացված է միաձայն:

Հարց 2. Նախորդ նիստից անցած ժամանակահատվածում դպրոցի աշխատանքների մասին հակիրճ տեղեկություններ:

Հարց 3. ՀԽ ներկայացվող պարբերական հաշվետվությունների և զեկույցների ցանկի ներկայացում

Որոշում՝ հարց 3

Որոշվեց հաստատել ՀԽ ներկայացվող պարբերական հաշվետվությունների և զեկույցների ցանկը (ըստ հավելված 3-ի), առաջնորդվել սահմանված ցանկով և ժամկետներով՝ ընթացս փոփոխություններ իրականացնելով, եթե կարիք առաջանա:

Որոշումը կայացված է միաձայն:

Հարց 4. Դպրոցի 2025-2030թթ. ռազմավարության ներկայացում:

Որոշում՝ հարց 4

Որոշվեց հաստատել դպրոցի 2025-2030թթ. ռազմավարության հետևյալ ռազմավարական ութ ուղղությունները՝ որպես ուղենիշ դպրոցի համար մինչ ռազմավարության ամբողջական փաթեթի ընդունումը:

Ռազմավարական ուղղություններ.

1. Ակադեմիական գերազանցություն,
2. Նորարարություն և ստեղծարարություն,
3. Աշակերտների ոգին, արժեքներն ու անձնային զարգացումը,
4. Գերազանց ֆիզիկական կրթական միջավայր,
5. Համայնքների զարգացում, ազդեցություն և սոցիալական պատասխանատվություն,
6. Գլոբալ կապեր և հայկական ինքնության ներկայացումը աշխարհում,
7. Առաջնորդության բարձր ստանդարտներ, թիմի արդյունավետություն ու լավակեցություն,
8. Ֆինանսներ ու կայուն զարգացում:

Որոշումը կայացված է միաձայն:

Հարց 5. 2026-2027 ուսումնական տարվա ուսման վարձերի սահմանման հարց:

Որոշում հարց 5 *Որոշվեց՝* 1. *հաստատել «Այբ» դպրոցի ուսման վարձի սահմանման քաղաքականության փոփոխությունները և լրացումները ըստ հավելված 5.1-ի::* 2. *հաստատել «Այբ» դպրոցում 2026-2027 ուստարվա ուսման վարձերի բազային դրույքները, տրանսպորտային փոխադրումից, ինչպես նաև Ա-Մակարդակի հավելյալ ծրագրից օգտվելու դեպքում ուսման վարձին ավելացվող բաղադրիչների գումարները ըստ հավելված 5.2.-ի:* Որոշումը կայացված է միաձայն:
Հարց 6. Պահուստային ֆոնդի բաշխման առաջարկություն. դպրոցի տարածքում մարզական հանդերձարանների ստեղծման ծրագիր:
Որոշում հարց 6 *Որոշվեց հավանություն տալ հայեցակարգին, Դ.Սահակյանին հանձնարարել մշակել համագործակցության պայմանագիրը և ներկայացնել ՀԽ-ին՝ հարցի վերջնական որոշման համար::* Որոշումը կայացված է միաձայն:
Հարց 7. Շրջանավարտների ակումբի գործունեության զեկույց
Հարց 8. ՀԽ անդամների կողմից դասալսումների կանոնակարգում
Հարց 9. Օրակարգում չներառված հարց. «Այբ» կրթական հիմնադրամի և «Այբ» դպրոցի հոգաբարձության խորհուրդների համատեղ ռազմավարական կոմիտեի ձևավորում
Հարց 10. ՀԽ-ի հաջորդ նիստին առաջարկվող հարցեր: Բոլոր հարցերը ներկայցնել մայիսի 7-ի նիստին, եթե այլ բան չի նշված հանձնարարության վերաբերյալ:
Նիստի ավարտ Հանդիպումն ավարտվեց ժամը 21:10-ին:

ՀԽ նախագահ

Սարգիս Բադալյան _____

Նիստի քարտուղար

Էլլա Ավագյան _____